ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՄՐԳԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
АРМАВИРСКИЙ ОБЛОСТЬ
МУНИЦИПАЛИТЕТ
С. МРГАСТАН

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մրգաստանի համայնքապետարան, Մրգաստան 3/15
հեռ. 0231-6-38-10, 094-80-53-63 mrgastan.armavir@mta.gov.am

Հ.Հ. ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ՝ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

N 5-198
«02» 11 2017թ.

ՀԱՐԳԵԼԻ ՊԱՐՈՆ ՄԱՐԶՊԵՏ

Ձեզ է ներկայացվում՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրգաստան համայնքի ղեկավարի 2017թվականի հոկտեմբեր ամսվա ընթացքում արձակած կարգադրությունները և ընդունած որոշումները:

Առդիր՝ 6 թերթ

ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մրգաստանի համայնքապետարան, Մրգաստան 3/15
հեռ. 0231-6-38-10, 094-80-53-63 mrgastan.armavir@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

«6» հոկտեմբերի 2017թվական թիվ 7-Ա

ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Բյուջետային համակարգի մասին» օրենքի հոդված 33-ի երրորդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրգաստան համայնքի ավագանու 2016թվականի դեկտեմբերի 16-ի, 2017թվականի «Բյուջեն հաստատելու մասին» թիվ 2 նիստի, թիվ 9-Ն որոշումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրգաստան համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 16-ի, 2017թվականի «Բյուջեն հաստատելու մասին» թիվ 2 նիստի, թիվ 9-Ն որոշման մեջ կատարել հետևյալ վերաբաշխումը.

01 բաժին 01 խումբ 01 դաս 4252 հոդվածից պակասեցնել 200.0 հազար դրամ
01 բաժին 01 խումբ 01 դաս 4264 հոդվածին ավելացնել 100.0 հազար դրամ
01 բաժին 01 խումբ 01 դաս 4267 հոդվածին ավելացնել 100.0 հազար դրամ

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ ընդունման պահից:

ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

2017թվական հոկտեմբերի 6
գ. Մրգաստան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մրգաստանի համայնքապետարան, Մրգաստան 3/15
հեռ. 0231-6-38-10, 094-80-53-63 mrgastan.armavir@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

«11» հոկտեմբերի 2017թվական թիվ 8-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՏԱՐ ՄԱՍՆԱԳԵՏԻ /ԾԱԾԿԱԳԻՐ 3.1-3/ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի երրորդ մասով և հիմք ընդունելով Արմավիրի մարզպետի 09.10.2017թվականի թիվ 01/07.1/4174-17 գրությունը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրգաստան համայնքի ղեկավարի 2009 թվականի փետրվարի 27-ի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետի /ծածկագիր 3.1-3/ «Պաշտոնի անձնագիրը հաստատելու մասին» թիվ 1-Ա որոշման թիվ 1-Ա որոշման, թիվ 4 հավելվածի «Գիտելիքներ և հմտություններ» բաժնում.
Ավելացնել՝
«Վարչական իրավախախտումների մասին», «Թափոնների մասին», «Տեղական տուրքերի և վճարների մասին», «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների և դրա հետ կապված այլ իրավական ակտերի մասին իմացություն:

«Իրավունքները և պարտականություններ» բաժնում

Ավելացնել՝
Աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ կազմակերպում է համայնքում կենցաղային աղբի հեռացման, աղբահանության հարկ վճարողների հաշվառման, ինչպես նաև դրա վճարի գանձման, համայնքի տարածքում աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքների հետ կապված վարչական իրավախախտումների հայտնաբերման, թերությունների վերացման աշխատանքներ, որոնք կարգավորվում են Հայաստանի Հանրապետության «Սահմանադրությամբ», «Տեղական ինքնակառավարման մասին», «Թափոնների մասին», «Տեղական տուրքերի և վճարների մասին», «Աղբահանության և սան. մաքրման մասին» օրենքներով և այլ իրավական ակտերով:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ ընդունման պահից:

ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

ՂԵԿԱՎԱՐ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

2017թվական հոկտեմբերի 11
գ. Մրգաստան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մրգաստանի համայնքապետարան, Մրգաստան 3/15
հեռ. 0231-6-38-10, 094-80-53-63 mrgastan.armavir@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

«20» հոկտեմբերի 2017թվական թիվ 9-Ա

2017ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 21-ԻՆ ՀԱՍԱՊԵՏԱԿԱՆ ՇԱԲԱԹՕՐՅԱԿԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Արմավիրի մարզպետի 16.10.2017թվականի թիվ 01/07.1/4287-17 գրությամբ, առաջնորդվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հոդված 42-ի առաջին մասի 16-րդ կետով, իրականացնելով «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջները.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.2017թվականի հոկտեմբերի 21-ին կազմակերպել շաբաթօրյակ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրգաստան համայնքի ամբողջ տարածքում, մասնակից դարձնելով համայնքի բնակիչներին, համայնքում գործող կրթական հաստատության աշխատակազմին և աշակերտությանը:
2.Շաբաթօրյակի կազմակերպման և իրականացման աշխատանքների պատասխանատու նշանակել՝ համայնքապետարանի ադմինիստրատիվ աշխատողներին:
3.Հաստատել շաբաթօրյակի կազմակերպման և անցկացման գործողությունների պլանը՝ համաձայն հավելվածի:
4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում՝ ընդունման պահից:

ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

ՂԵԿԱՎԱՐ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

2017թվական հոկտեմբերի 20
գ. Մրգաստան

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Մրգաստան
համայնքի ղեկավրի 2017թվականի
հոկտեմբերի 20-ի թիվ 9-Ա որոշման

ՇԱԲԱԹՕՐՅԱԿԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆ

Համայնքը բաժանվել է հետևյալ տարածքների իրենց պատասխանատուներով.

1.Դպրոցի, բուժ. կետի, հուշարձանի տարածք, պատասխանատու՝ դպրոցի տնօրինություն, ի դեմս տնօրեն՝ Ն. Ասատրյանի:
2.Համայնք մտնող ճանապարհ, պատասխանատու՝ Ս. Ղարիբյան համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար:
3.2-3-րդ փողոցների պատասխանատու՝ Ա. Հովակիմյան առաջատար մասնագետ:
4.4-5-րդ փողոցների պատասխանատու՝ Մ. Հարությունյան «Մշակույթի տան» վարիչ:
5.Համայնքապետարանի տարածք՝ Գ. Եղիազարյան առաջին կարգի մասնագետ:
6.6-7-րդ փողոցների պատասխանատու՝ Հ. Եդիգարյան ավագանու անդամ:
7.14-18-րդ փողոցների պատասխանատու՝ Ա. Հակոբյան առաջին կարգի մասնագետի պաշտոնակատար:
Աշխատանքները համակարգում է համայնքի ղեկավար՝ Ռ. Խաչատրյանը:
Աշխատանքները սկսել ժամը՝ 10:00-ին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄՐԳԱՍՏԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մրգաստանի համայնքապետարան, Մրգաստան 3/15
հեռ. 0231-6-38-10, 094-80-53-63 mrgastan.armavir@mta.gov.am

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«02» հոկտեմբերի 2017թվական թիվ 30

ԽԱՉԻԿ ՍԱՄՎԵԼԻ ԱՎԱԳՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Աշխատանքային օրենսգրքի» հոդված 109-ի առաջին մասի 2-րդ կետով և հիմք ընդունելով «Ծառայությունների մատուցման» թիվ 2 պայմանագրի 7-րդ կետը.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ

1.Լուծել՝ Խաչիկ Սամվելի Ավագյանի հետ կնքած «Ծառայությունների մատուցման ժամանակավոր աշխատանքային» թիվ 2 պայմանագիրը, նրա գործողության ժամկետը լրանալու կապակցությամբ՝ 2 հոկտեմբերի 2017թվականից:
2.Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

2017թվական հոկտեմբերի 02
գ.Մրգաստան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Մրգաստանի համայնքապետարան, Մրգաստան 3/15
հեռ. 0231-6-38-10, 094-80-53-63 mrgastan.armavir@mta.gov.am

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«19» հոկտեմբերի 2017թվական թիվ 31

ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԵՌՕՐՅԱ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Աշխատանքային օրենսգրքի» հոդված 209-ով.

ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մրգաստանի համայնքապետարանի Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի նախագահ՝ Սուսաննա Վանիկի Ղարիբյանին գործուղել Արմավիր քաղաք, մասնակցելու Արմավիրի մարզի երեխաների պաշտպանության բաժնի կողմից կազմակերպվող եռօրյա դասընթացներին «Երեխաների դեմ բռնությունների կանխարգելում» թեմայով:
2.Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՄՐԳԱՍՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

ՂԵԿԱՎԱՐ Ռ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

2017թվականի հոկտեմբերի 19
գ. Մրգաստան